ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ (*PARRHĒSIA*)
SPECIAL TOPIC: BOLDNESS (*PARRHĒSIA*)

Այս տերմինի հունարեն տարբերակը բաղադրյալ բառ է կազմված՝ «բոլոր» (*pan*) և «խոսք» (*rhēsis*) բառերից: Խոսքի այս ազատությունը կամ համարձակությունը հաճախ ուներ երկրորդ նշանակությունը՝ համարձակություն հակառակության կամ մերժվածության միջավայրում (տես՝ Հովհ.10:24, 1 Թեսաղ.2:2):

Հովհաննեսի գրքերում (գործածված է 13) այն հաճախ արտահայտում է հանրային հայտարարություն (տես՝ Հովհ7:4, նաև Պողոսի թղթերում՝ Կող. 2:15): Սակայն երբեմն այն պարզապես կարող է նշանակել «պարզորեն» (տես՝ Հովհ.10:24, 11:14, 16:25,29):

Գործքում Առաքյալները Հիսուսի մասին խոսում էին այնպես (համարձակությամբ), ինչպես որ Հիսուսն էր խոսում Հոր մասին, Իր ծրագրերի և խոստումների մասին (տես՝ Գործք 2:29, 4:13,29,31, 9:27-28, 13:46, 14:3, 18:26, 19:8, 26:26, 28:31): Պողոսը նաև խնդրում էր, որ աղոթեն ավետարանը համարձակությամբ քարոզելու (տես՝ Եփես.6:19, 1 Թեսաղ.2:2) և ավետարանը ապրելու համար (տես՝ Փիլ.1:20):

Հանդերձյալ կյանքի համար հույսը, որ Պողոսն ուներ Քրիստոսի մեջ, նրան համարձակություն և վստահություն էր տվել այս չար ժամանակներում ավետարանը քարոզելու (տես՝ 2 Կորն.3:11-12): Նա նաև վստահություն ուներ, որ Հիսուսի հետևորդները արժանավայել կերպով կապրեն (տես՝ 2 Կորնթ.7:4):

Այս տերմինն ունի ևս մի կողմ: Եբրայեցիները այն կիրառում էին Քրիստոսի մեջ ուենցած համարձակության բացառիկ իմաստով՝ Աստծուն մոտենալու և Նրա հետ խոսելու համար (տես՝ Եբր.3:6, 4:16, 10:19,35): Հավատացյալները կատարելապես հրավիրված և ընդունված են Որդու միջոցով Հոր հետ մտերմիկ հարաբերության:

ՆԿ-ում այն կիրառվում է մի քանի կերպ՝

1. վստահության, համարձակության կամ քաջության իմաստով, կապված՝
   ա. մարդկանց հետ (տես՝ Գործք 2:29, 4:13,31, 2 Կորնթ.3:12, Եփես.6:19)
   բ. Աստծո հետ (տես՝ 1 Հովհ.2:28, 3:21, 4:12, 5:14, Եբր.3:6, 4:16, 10:19)
2. հստակ, պարզ կամ միանշանակ խոսելու իմաստով (տես՝ Մարկ.8:32, Հովհ.7:4,13, 10:24, 11:14, 16:25, Գործք 28:31)
3. հրապարակավ՝ բացահայտ խոսելու իմաստով (տես՝ Հովհ.7:26, 11:54, 18:20)
4. նմանատիպ բառ (*parrhēsiazomai*) կիրառվում է դժվար կացություններում համարձակությամբ քարոզելու դեպքում (տես՝ Գործք 18:26, 19:8, Եփես.6:20, 1 Թեսաղ.2:2)